ԽՍՊԱՍ ՀԱՅՐԵՆՅԱՑ*)

«ՈՐՊԵՍ ՄԱՅՐ ՈՐԴՎՈՎՔ ԲԵՐԿՐՅԱԼ», ահա բացատրություն մը, որ Աստվածաշունչը կգործածե արտահայտելու համար զերագույն զգացումը այս խանդակաթ ուրախության, որ մայրերը կունենան երբ իրենց շուրջ հավաքված կտեսնեն իրենց զավակները։ Մինթե մայր Հայաստանին չէ՞ որ ամենեն ավելի կհարմարի այդ ասածվածքը, երբ սուգի քողերը վերցուցած թևերը կբանա՝ ընդունելու ու իր ծոցին մէջ գողտրորեն գրկելու համար դարերե ի վեր սփյուռս աշխարհի ցրված իր զավակները։

—Այո՛, Մայր, պիտի գանք ամենքս ալ, որքան դուն մեր, նույնքան ալ մենք քո կարոտդ ունինք։ Դո՛ւն, փլունիկի մը պես, քու աճյունեներդ հարությունն առիր, ավելի ուժգ ու ավելի գեղեցիկ քան երիտասարդության օրերուն, իսկ մենք, Սփյուռքի զավակներդ, ջանացինք, յուրաքանչյուրը իր կարողության չափով, վառ պահել քո սերդ ու հիշատակդ մեր սրտին մեջ ու մեր երիտասարդ կուրծքերու տակ։

Ներգաղթի շեփորը կհնչե ու վերջապես կիրագործվի դարերու երազը հայրենիքի միության ու մեծության՝ որուն համար մեր հայրերը ամեն տառապանք հանձն առին, աքսորի, բանտի ու անապատներու մեջ ամենեն անարդ մահով մեռան։ Այսպիսի նվիրական մեկ պահուն, սրբապղծություն ու քրեական հանցանք պիտի ըլլար ամենադուլզն կերպով իսկ արգելք հանդիսանալ անոր իրականացման։

Ընդ առաջ երթալով Հայ Կաթողիկե Երիտասարդաց Միության անդամներուն հայտնած բաղձանքին, կուզենք այս տողերով լուսաբանել մտքերը Հայ Կաթողիկեներու շուրջ հարուցված տարակարծությանց մասին, որ սկսան շրջիլ այն օրեն ի վեր, որ Անգարայեն եկած հեռագիր մը կըսեր թե Պոլսո Հայ Կաթողիկեները կմերժեն եղեր Հայաստան վերադառնալ։

Կհասկնանք ժողովրդական բնական հուզումը այդպիսի արտահայտության մը առջև, երբ այդ լուրը զարմանք ու զայրույթ պատճառեց նախ նույն ինքն կաթողիկե հայերուն։

Բայց հեռագրին վերլուծումը բանականության լույսին տակ, ցույց կուտա, որ կամ Թուրքիոյ քաղաքական պայմանները չեն ներ՝ Հայոց ազատորեն շարժելու և կամ թե այդ հեռագիրը անհիմն է, ինչ որ ավելի ճիշտ կթվի, եթե նկատի առնենք այդ առթիվ թրքական մամուլին ըրած կարգ մը բողոքները, առանց հաշվելու ուրիշ ստույգ աղբյուրներե առած մեր տեղեկությունները՝ արձանագրվողներու բազմության շուրջ։ Ապա Պոլսո հայ կաթողիկեներու միտքը հասկանալու համար պետք չէ դիմել օտար աղբյուրե բխած հեռագրի մը, այլ անոնց համայնքին պետերուն, կամ գեթ հայ աղբյուրներու։

Բայց ահա ուրիշ հարցում մը։ Ի՞նչ է հայ կաթողիկեներու դիրքը ներգաղթի նկատմամբ Լիբանանու ու Սուրիո մեջ։ Կպատասխանենք. անվերապահ գործակցություն ազգային բոլոր մարմիններու հետ, որ այդ ուղղությամբ կաշխատին։ Եվ այս՝ Սասունցի Դավիթ գորգասլանեն սկսյալ մինչև երեկվա Անթիլիասի ժողովը։

Որով և իրենց բաղձանքն է՝ ամբողջ հայությունը ամփոփված տեսնել ընդարձակված Հայաստանի մը սահմաններեն ներս, ուրկե դուրս ազգային փրկություն չկա։ Ապա արծարծել իսկ ամենուն սրտին մեջ ներգաղթի բուռն փափաք մը։ Ուստի և խրատել, ինչպես տր ըրավ պրոֆ. Աշոտ Աբրահամյան, բացարձակ ու անկեղծ հավատարմություն մեր քաղաքացիական պարտականություններուն հյուրընկալ երկրներու մեջ մինչև ներգաղթի ժամը։

—Որքան եռանդով, նույնքան ալ հանդարտությամբ գիտնանք սպասել մեկնումի մեր կարգին։

---

*) Մեր տրամադրության տակ եղած բազմաթիվ նյութերից զետեղում ենք միայն մեկը, որպես ապացույց, որ կաթոլիկ հայությունը չի բաժանում կարդինալ Աղաճանյանի հայրենատյաց տեսակետները։

ԽՄԲԱԳՐ.

Հայաստանի ներկա սահմանները անբավարար ըլլալով արտասահմանի մեկ ու կես միլիոն հայութիւնը ընդունելու, տարակուսս չկա թե, մինչև այդ սահմաններուն ընդարձակումը (և մաղթենք որ շաբաթներու խնդիր ըլլա ան) Հայաստանի իմաստուն և իրազեկ կառավարութիւնը ձեռք պիտի երկարե նախ ամենեն ավելի զրկյալ իր զավակներուն։ Մեր պարտականութիւնը պիտի ըլլա ամեն գնով օժանդակել Հայաստանի կառավարութեան ծրագիրներուն գործադրութեան և կարգապահութեամբ սպասել մեզի տրվելիք հրամանին։

Հայ կաթողիկեները ոչ մեկ տարակուսս ունին թե Հայաստանի մեջ պիտի վայելեն մյուս կրոնքերու հավասար իրավունքներ, որովհետև հոն հայը հայ է միայն։ Կրոնքը խղճի ազատության ձգված խնդիր մըն է։ Եվ անոնք պիտի մեկնին Հայաստան վայելելու իրենց հայրենիքին բարիքները և ի սպաս անոր դնելու իրենց բազուկը, տաղանդն ու կարողությունները։

Ահա մեր գաղափարը։ Երկրի մը մեջ ուր լեզու սանձ չունի, եթե ասկե տարբեր մտածումներ արտաբերվին, հայրենասիրությունը կպահանջե քաղցրությամբ լուսաբանել մոլորողը, փոխանակ մատի փաթթոց ընելու անոր լսածները և փոխադարձ սիրով պատրաստվիլ եղբայրաբար ապրելու մեր իրաձերուն առարկա Մայր Հայրենիքին մեջ։

Հ. ՎՐԴ. ԹԵՔԵՅԱՆ

(«ԱՌԱՒՕՏ» հունվ. 4 1946 թ.)